եւ հանապազ ի սուգ եւ ի տրտմութիւն էի անմխիթար։

ԲԱԼՈՒ

Եւ կալայ անդ ասորի մի վարձով, որ զի-
տէր քրդերէն եւ հայնակ. եւ անցեալ զպատ-
վական ԵՓՐԱՏ գետն իբեք անգամ. մինն
քրդու շալկով, միւսովն՝ կէմով. եւ էր ջուրն
յոյժ քաղցրահամ եւ սաղ, որ թէ դատ մի ու- 5
տես եւ ըմպես՝ մարսես։ Եւ անտի օրուկէսն
ի ԲԱԼՈՒ խասապան՝ բազում Հայոց գեղո-
ւրօք։ Եւ էր Բալուն իբրեւ կղզի, զի Եփրատն
բոլորեալ էր զնայ, սակաւ մի ցամաք մուտ
ունի. եւ ունէր սիվրի բարձր անառիկ բերթ 10
մի որպէս Օսմանճուխին. եւ կայր անդ եկե-
ղեցի մի եւ աղօթատեղ Մեսրոբ վարդապե-
տին, զոր մտեալ ի ներս՝ աղօթեցաք, մեղաց
թողութիւն խնդրեցաք մեղ եւ մեր ննջեցե-
լոց։ Եւ հանդէպ նմին կանգնած վէմ մի կայր, 15
որպէս տապան Հրէից. եւ ի վերայ գիր, զոր
ոչ կարացաք ընթեռնուլ. եւ ասին թէ այս
նշանագիրքն են, որ յԱստուծոյ տվաւ Հայոց։
Եւ էր Ը եկեղեցի Հայոց վիմաշէն գեղեցիկ եւ
նոր. եւ մին մէջիթ Քրդաց. եւ այն անարդ եւ 20
յարդով ծածկած, պատերն ջաթնէ։ Բայց զի-
նին խիստ շատ, զի այդիք յոլովք են եւ կա-
քաւք բազում եւ գէր, իրեք, չորս մէկ փա-
բայ։ Կացի անդ շաբաթ մի, եւ այլ մարդ
վարձեցի, զի նա (ասորին) դարձաւ ի տուն։ 25

1 կալա։ — 2 քրթէրէն։ — 4 քրթու։ — 5 ոյժ։
— 20 քրթաց։ — 21 ծածկաց։ — 22 կաքաւք։